



Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. դեկտեմբերի 16-17-ին տեղի կունենա
Գավառի պետական համալսարանի ամենամյա 20-րդ գիտաժողովը՝
նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության և մայիսյան
հերոսամարտի 100-ամյա հորելյանին

1. Գիտաժողովն անցկացվելու է ըստ գիտության հետևյալ բնագավառների.

- ✓ *Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ*
- ✓ *Քիմիական գիտություններ*
- ✓ *Կենսաբանական գիտություններ*
- ✓ *Տեխնիկական գիտություններ*
- ✓ *Էկոլոգիական գիտություններ*
- ✓ *Գյուղատնտեսական գիտություններ*
- ✓ *Պատմական գիտություններ*
- ✓ *Տնտեսական գիտություններ*
- ✓ *Փիլիսոփայական գիտություններ*
- ✓ *Բանասիրական գիտություններ*
- ✓ *Իրավաբանական գիտություններ*
- ✓ *Մանկավարժական գիտություններ*
- ✓ *Հոգեբանական գիտություններ*
- ✓ *Սոցիոլոգիական և քաղաքական գիտություններ*
- ✓ *Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն*

2. Հոդվածների ներկայացվող տեխնիկական պահանջներն են՝

Գիտաժողովի նյութերի հրապարակման համար խնդրում ենք մինչև ա/թ նոյեմբերի 10-ը Գավառի պետական համալսարան ներկայացնել գիտական հոդված՝ 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով երկու օրինակից, համակարգչային շարվածքով B 5 (17սմ x 24սմ) չափի տպագրական թղթի վրա, GHEA Grapalat տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով), էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները 1սմ: Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, Bold): Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (Bold), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել մեծատառով նոր տողից), բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը՝ վերջում նշելով նաև բանալի բառերը, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները: Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերը հավաքել Microsoft Equation Editor 3.0 ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:

Նրանք, ովքեր չեն հանդիսանում բուհի աշխատակիցներ հոդվածների տպագրման համար պետք է վճարեն սահմանված գումար՝ հոդվածի յուրաքանչյուր էջի համար 1.800 (հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով, փոխանցումն իրականացնել ցանկացած բանկից ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ Կամո մ/ճ 16021100146800 հաշվեհամարով: Չափորոշիչներին չհամապատասխանող զեկույցները չեն ընդունվելու: Զեկուցումները ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:

Կից անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ամբիոնի երաշխավորությունը, կարծիք առաջարկվող հոդվածի մասին:

Գավառի պետական համալսարան,

ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1,

հեռ. (0-60) 46-04-03, (0-264) 2-57-75

E- mail: info@gsu.am